

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը ազգանունը, զբացեցրած պաշտոնը՝** Վահե Գրիգորյան, ՀՀ Միջուկային Անվտանգության Կարգավորման Կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի տեղակալ:
2. **Գործուղման վայրը/ ժամկետը՝** Վիեննա, Ավստրիա, 2026թ. ապրիլի 12-24:
3. **Հրավիրող կողմը՝** Ատոմային Էներգիայի Միջազգային Գործակալություն (այսուհետ՝ ԱԷՄԳ):
4. **Գործուղման նպատակը՝** Մասնակցություն Միջուկային Անվտանգության Կոնվենցիայի 10-րդ դիտարկման հանդիպման աշխատանքներին:
5. **Քննարկված թեմաները՝** Հանդիպման ընթացքում քննարկվել է Միջուկային անվտանգության Կոնվենցիայի դրույթների կատարումը, այդ թվում նաև ռազմական իրավիճակներում:
6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝** Հանդես եմ եկել զեկույցով՝ 2023-2026թթ. ընթացքում ՀՀ կողմից Միջուկային անվտանգության կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ՝ ներկայացնելով միջուկային անվտանգության կարգավորման նպատակով Կոմիտեի կողմից իրականացված աշխատանքները, ՀԱԷԿ կողմից իրականացված անվտանգության բարձրացման միջոցառումները, Ֆուկուշիմայի ԱԷԿ վթարից հետո սթրես-թեսթի միջոցառումների ազգային ծրագրի իրականացումը, վթարային պատրաստվածությունը և այլ թեմաներ: Զեկույցի ընթացքում ներկայացվեց նաև ՀՀ կողմից իրականացված քայլերը հատուկ խնդիրների վերաբերյալ, որոնք սահմանվել էին Միջուկային անվտանգության կոնվենցիայի 8-րդ և 9-րդ համատեղ դիտարկման արդյունքում.
 - Ատոմային կայանների անվտանգ շահագործման վրա ազդող արտակարգ իրավիճակների կառավարում,
 - Նոր և նորարարական տեխնոլոգիաները հաշվի առնելով՝ ազգային կարգավորող կարողությունների ուժեղացում,
 - Միջազգային համագործակցության խթանում,
 - Միջազգային գործընկերային վերանայման առաքելությունների խթանում և դրանց արդյունքների ժամանակին հասցեագրում,
 - Գլոբալ կլիմայական փոփոխությունների հնարավոր ազդեցությունը ատոմային կայանների անվտանգ շահագործման վրա,
 - Մատակարարման շղթաների հուսալիության ապահովում,
 - Ծերացման կառավարման ռազմավարություններ՝ ատոմային կայանների շահագործման աջակցման նպատակով,
 - Վթարային պատրաստվածության և հակազդող միջոցառումների ուժեղացում, անդրսահմանային համագործակցության խթանում:

Զեկույցից հետո մասնակից երկրների կողմից ազգային հաշվետվությունների և ելույթի վերաբերյալ հնչեցին հարցեր, որոնց տրվեց սպառիչ պատասխաններ: Ներկայացված հարցերը հիմնականում վերաբերում էին մարդկային ռեսուրսների կառավարման և կադրերի պատրաստմանը, անվտանգության բարձրացման

միջոցառումների ներդրմանը, ծերացման կառավարմանը և նոր էներգաբլոկի կառուցման ուղղությամբ ենթակառուցվածքների բարելավմանը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման արդյունքում կազմվեց ՀՀ ազգային հաշվետվությունը, որտեղ ամփոփվեց 2023-2026թթ. ընթացքում ՀՀ կողմից միջուկային անվտանգության բարձրացման աշխատանքները:

Արձանագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունը ակտիվ մասնակցել է Միջուկային անվտանգության կոնվենցիայի դիտարկման աշխատանքներին, ժամանակին ներկայացրել է ազգային հաշվետվություն և պատասխանել է ազգային հաշվետվության նկատմամբ ստացված բոլոր հարցերին: Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է 46 հարց այլ մասնակից երկրներին և այլ երկրներից ստացել է 156 հարց:

Երկրների խմբի կողմից արձանագրվեց, որ ՀՀ կողմից իրականացվել են համապատասխան քայլեր Միջուկային անվտանգության կոնվենցիայի 8-րդ և 9-րդ համատեղ դիտարկման արդյունքում ի հայտ եկած մարտահրավերի իրականացման ուղղությամբ: Քննարկումների արդյունքում 4 մարտահրավերներից երկուսի և 1 խորհուրդի ուղղությամբ իրականացված քայլերը համարվեցին բավարար, և արդյունքում դրանք համարվեցին կատարված: Միջուկային անվտանգության կոնվենցիայի 8-րդ և 9-րդ համատեղ դիտարկման արդյունքում ի հայտ եկած 4 մարտահրավերներից երկուսը վերախմբագրվեց որպես նոր մարտահրավերներ:

Միջուկային անվտանգության կոնվենցիայի 10-րդ դիտարկման արդյունքում, ՀՀ հետ նույն խմբում ընդգրկված երկրների ներկայացուցիչների կողմից նշվեցին հետևյալ մարտահրավերները և խորհուրդը՝

- ✓ *Մարտահրավեր 1 – Կարողությունների զարգացում՝ Կարգավորող մարմնում, շահագործող կազմակերպությունում և այլ շահագրգիռ կողմերի մոտ՝ նոր տեխնոլոգիաների հնարավոր ներդրման գնահատման և ընտրության համար,*
- ✓ *Մարտահրավեր 2 – ANRA-ում աշխատուժի ընդլայնում՝ նոր հաստիքների ստեղծման, ուսումնական նյութերի մշակման, ինչպես նաև անձնակազմի հավաքագրման և վերապատրաստման միջոցով:*
- ✓ *Խորհուրդ 1 – Պարբերական անվտանգության վերանայման (PSR) արդյունքում ի հայտ եկած անվտանգության բարձրացման միջոցառումների, ինչպես նաև սթրես-թեստի ազգային գործողությունների ծրագրում (NACP) սահմանված միջոցառումների ժամանակին իրականացում:*

Երկրների խմբի կողմից արձանագրվեց նաև հետևյալ «Լավ գործունեության ոլորտները» (good performance) .

1. ՀԱԷԿ-ի ինքնագնահատման մոտեցումը, որը կազմակերպված է տարբեր մակարդակներով, հնարավորություն է տալիս վերլուծության ընթացքում կիրառել մանրամասնության աստիճանը (կորպորատիվ մակարդակ, գործունեության առանձին ոլորտների մակարդակ, կառուցվածքային ստորաբաժանումների մակարդակ և անձնակազմի անհատական մակարդակ)՝ դրա արդյունավետությունը առավելագույնի հասցնելու նպատակով:

2. Կարգավորող դաշտը և շահագործող կազմակերպության գործողությունները՝ ուղղված ծերացման կառավարման ապահովմանը՝ ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգմանը աջակցելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Բոլոր երկրների ելույթների և ազգային հաշվետվությունների հիման վրա, մասնակիցների կողմից արձանագրվեցին հետևյալ համանման խնդիրները.

1. Մարդկային ռեսուրսներ, գիտելիքների կառավարում, կարողունակությունների կառավարում և սերնդափոխություն,

Իրականացնել. Կողմերը նշել են, որ կարգավորող մարմիններում, միջուկային արդյունաբերությունում մարդկային ռեսուրսների կայունության հետ կապված առկա են մի շարք մարտահրավերներ, ներառյալ աշխատուժի ծերացումը, փորձի և գիտելիքների փոխանցումը հաջորդ սերնդին, ինչպես նաև նոր որակավորված մասնագետներ ներգրավելու և արդեն ներգրավված կադրերին պահպանելու անհրաժեշտությունը: Կողմերը նաև ընդգծել են, որ կարգավորող մարմնի կայուն ֆինանսավորումը կարևոր է նման մարտահրավերներին դիմակայելու համար, ինչպես նաև կարգավորող անկախությունը ապահովելու և երկարաժամկետ պլանավորումը խթանելու նպատակով՝ արդյունավետ վերահսկողական կարողությունները պահպանելու համար:

2. Ծայրահեղ եղանակային պայմաններ և փոփոխվող շրջակա միջավայրային պայմաններ,

Իրականացնել. Միջուկային անվտանգության վրա ծայրահեղ եղանակային պայմանների հաճախականության և ինտենսիվության աճի ազդեցությունը ճանաչվել է որպես ընդհանուր խնդիր: Ավելի կոնկրետ՝ Կողմերը նշել են անհրաժեշտությունը՝ հաշվի առնելու փոփոխվող շրջակա միջավայրի պայմանները անվտանգության գնահատումներում, կարգավորող որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև գործող և նոր ատոմային կայանների երկարաժամկետ պլանավորման մեջ:

3. Արհեստական բանականության ազդեցությունը միջուկային անվտանգության հետ կապված գործունեությունների վրա

Իրականացնել. Կողմերը նշել են արհեստական բանականության (AI) և առաջադեմ թվային տեխնոլոգիաների օգտագործման նկատմամբ աճող հետաքրքրությունը՝ միջուկային անվտանգության հետ կապված գործունեություններում: Կարգավորող մոտեցումները՝ AI-ի կիրառման համար միջուկային անվտանգության ոլորտում, դեռևս զարգացող փուլում են բազմաթիվ կողմերի մոտ:

Կողմերը ընդգծել են, որ թեև նման տեխնոլոգիաները կարող են ապահովել հնարավոր օգուտներ, դրանք նաև առաջացնում են մարտահրավերներ, այդ թվում՝ թափանցիկության, վավերացման և ստուգման, տվյալների որակի, ինչպես նաև մարդ-մեքենա փոխազդեցության հետ կապված հարցերում:

Կարևոր է ապահովել, որ միջուկային անվտանգության հիմնական պատասխանատվությունը մնա շահագործող կազմակերպությունների վրա, իսկ

պատշաճ վավերացման և ստուգման համար անհրաժեշտ է մարդկային վերահսկողություն և համապատասխան կարողունակություն:

4. Վթարային պատրաստվածություն և հակազդում արտակարգ իրավիճակների պայմաններում

Իրականացնել. Կողմերը ընդգծել են վթարային պատրաստվածության և հակազդման միջոցառումների բարելավման անհրաժեշտությունը, ներառյալ ազգային շահագրգիռ կողմերի հետ արդյունավետ համակարգումը և հանրության հետ արդյունավետ հաղորդակցությունը՝ հանրային վստահությունը պահպանելու նպատակով:

Ուշադրություն է դարձվել սահմաններից դուրս ազդեցություններին և ճառագայթաբանական հետևանքների մոնիթորինգին՝ կապված արտակարգ հանգամանքների հետ, ինչպիսիք են բնական աղետները և զինված հակամարտությունները:

Կողմերը նաև շեշտել են միջազգային հաղորդակցության հստակ, թափանցիկ և ժամանակին իրականացման կարևորությունը:

5. Հուսալի մատակարարման շղթաների ապահովում

Իրականացնել. Հուսալի մատակարարման շղթաները հանդիսանում են միջուկային կայանների անվտանգության նախապայման՝ միջուկային ամբողջ կյանքի ցիկլի ընթացքում: Մատակարարման շղթաների նկատմամբ պահանջները փոփոխվում են: Նոր/այլընտրանքային մատակարարների ապահովումը ներկայացնում է մարտահրավեր միջուկային ոլորտի համար:

Արտահայտվել են մտահոգություններ միջազգային գնումների գործընթացների խաթարումների, ինչպես նաև մասնագիտացված ծառայությունների և փորձագիտական կարողությունների հասանելիության վերաբերյալ, ինչը կարող է ազդել սպասարկման, արդիականացման և երկարաժամկետ շահագործման վրա:

Վերոնշյալ խնդիրների և մարտահրավերների ուղղությամբ իրականացված աշխատանքներին պետք է անդրադառնալ Միջուկային անվտանգության կոնվենցիայի 11-րդ դիտարկման հանդիպման ազգային հաշվետվությունում և ազգային զեկույցում, որի հանդպումը տեղի կունենա 2029թ. ապրիլի 9-20:



Վահե Գրիգորյան

31.04.26